

ԼՈՒՐԵՐ

Փարիզի Լա Ֆրանս լրագիրը կը ծանուցանէ թէ, թէ գաղղիական նաւատորմի շինական կառուար քաղաք մը գրաւէր է, բայց ուրիշ լրագիրներ կը հերքեն այս լուրը:

Անգլիոյ արտաքին գործոց նախարարի խորհրդական լուր միջմօրէն յայտարարեց Հասարակաց խորհրդարանին թէ, առայժմ հարկաւոր չէ բայցաւրի միջոցներ ձեռք առնել անգլո-չինական տուր և առը պաշտպանելու համար:

Մինչ մէկ կողմէ փարսկեան նշանաւոր թերթ մը կը ծանուցանէ թէ, ժուլ մերթի և Լի Ֆոն Փաթի մէջ համաձայնութիւն գոյացեր է Ձինաստանի առ Ֆրանսա տարիք գոհունակութեան մասին, միւս կողմէ պաշտօնական ծանուցագիր մը կ'ընկերէ թէ, Բուսպէ մոլակային հեռագիրները միմային վարչական յատկութիւն մ'ունին, այսինքն վարչական կարգադրութիւններ ծանուցանող հեռագիրներ են միայն. Բանակցութիւնը տակաւին սկսած ըլլալ չեն թուրք, քանի որ Ձինաստանի Գաղղի. զեռպոյն Փաթիքսօթըրի գեւ. նոր զրկուեցան Փարսիէն հրահանգներ, նաւանաւանդ որ Ձինաստանի պայմանաժամ մը տալ հարկաւոր է, պահանջուած 250 միլիոն ֆրանքին երաշխաւորութիւն առնելէ առաջ:

Ռուսաց կայսեր հրամանաւ հանգուցեալ զօրաւոր թօթը պէնի հրամանատարութեան տակ դանուող զօրադուներ հանգուցեալին անուանով պիտի կոչուի ի յիշատակ անոր:

Պերլինի լրագիր մը կը գրէ թէ, պաշտօնական տեղեկանք ոչինչ դիտեն Ռուսաց կայսեր և վարչական ճանրորներու դիտաւորութեան մասին:

Բարիզէն կը գրեն թէ, առհասարակ կարծիք կայ եղբւր պաշտօնական ակմբող մէջ, որ չինական վէճը քիչ ատենի մէջ պիտի վերջնայ ի նպատակ Գաղղիոյ: Ամեն պատրաստութիւններ եղած են և կառավարութիւնը վճռական հարուած մը պիտի տայ խնդրոյն երբ բանակցութեանց պայմանաժամը լրանայ:

Սան Ֆրանչիսքոյէն ի Լոստրա հասած հեռագիր մը (Յուլիս 11 թուով) կ'ընկերէ թէ, Շաօ Շինի թուրք մէջ մեծ ապստամբութիւն մը ծագել է և քաղաքն աստաւաղաց ձեռքն անցեր է:

Աւստրիոյ գահաժառանգ Ռուտովի իշխան և իր ամուսին Սթէֆանի իշխանուհին Յուլիս 12ին Մունիխ հասեր են:

Մատրիտէն ի Հոմի հասած հեռագիր մը կ'ընկերէ թէ, Սպանիոյ արտաքին գործոց նախարարն յանձնարարած է Հոմի սպանիական զեռպոյն, որպէսզի բարեկամական և մտերմական հաւաստիքներ տայ Իտալիոյ արտաքին գործոց նախարար Պ. Մանչինիի, և հաստատէ թէ Սպանիոյ կառավարութիւնն իրապէս կը փափաքի կատարել գոհունակութիւն տալ Իտալիոյ, ի մասին այն միջադէպին որ պատահեցաւ Սպանիոյ հանրային

չինութեանց նախարար Պ. Փիտալի Ազգ. ժողովոյ մէջ արտասանած խօսքերուն պատճառաւ: Բանակցութիւններ տեղի ունեցան այս նպատակաւ, Սպանիոյ կառավարութեան և Մատրիտի իտալական զեռպոյնին միջև:

Երեսփոխանական ժողովոյ Յուլիս 7ի նիստին մէջ Սպանիոյ հանրային չինութեան նախարար Պ. Փիտալ ըսած էր, թէ Ամէսէ թագաւորը Հասարակապետականաց չնորհիւ միայն կրցած է Սպանիոյ դահլէ բարձրանալ: Յիշած էր թէ նոյն ատեն հասարակապետականք եկեղեցիները սերբապղծած էին, խորաններու առջև պարելով և երգելով, և խօսքը վերջացունելով փոքրիկքը կուսակից հռչակած էր Պապին աշխարհային իշխանութեան:

Ֆրանսայի մէջ քօչերա տիրելուն պատճառաւ, Աւստրիոյ պատերազմական գործող նախարարն ետ ձգեց Ֆրանսա բնակող Աւստրիացի պահեստի զօրաց 1884ի զինուորական կրթութեան կուշլու ծրագիրը:

Ձրոյց կայ թէ, կըսէ Պերլինէն քաջաւած հեռագիր մը. Պերլմարք իշխանն յիշատակագիր մը կը խմբագրէ Ալմանիոյ անգրգամութեան քաղաքականութեան, աւստր հիմանց և սահմանաց վրայ: Յիշատակագիրը պիտի յանձնուի կայսրութեան բոլոր գաշտակից երկիրներուն:

Աւստրիոյ կայսրն հրաւիրած է Սերպիոյ թագաւորին ներկայ գտնուիլ աւստրիական բանակին մեծ զինուորակազմին, թագաւորըն ընդունեց կայսրն հրաւերը:

Բէթլեյոյի մէջ կը հեռագրեն թէ, Պալմարիոյ արմատաւոր և պահպանողա. կուսակցութեանց միացումը անխորժ տպաւորութիւն ըրած է Ռուսիոյ մէջ:

Նոր զրքոյի մը հրատարակուել է Բէթլեյոյի մէջ, որ հանրութեան ուշադրութիւնը գրաւած է: Այդ գիրքը կը խօսի Ռուսիոյ և Աւստրիոյ ի Ռուսիա նիւ ունեցած կացութեան վրայ: Հեղինակն ազայուցանել կուգի, թէ Ռուսիոյ շահ և օգուտ ունի Ռուսիոյ հետ միանալու, և թէ իր այժմու քաղաքականութիւնը, որ զնուսանիա Ալմանիոյ և Աւստրիոյ փառասիրական դիտաւորութեան կը յանկուտեն, աւելի կամ նուազ հեռաւոր ապագայի մը մէջ բուռն հարուած մը պիտի կրէ հոսանք մը որ տակաւ առ տակաւ կը ձգուի Ռուսիոյ կենսական շահերն այդ երկու գաշտակից տերութեանց փառասիրութեան զոհելու:

ՔՕԼԷՐԱ

Մարտի մէջ յուլիս 17ին մեռնողներուն թիւն է 36, իսկ թուրքի մէջ 38:

Տեղական թերթ մը նոյն թվականաւ հեռագիր մը կը հրատարակէ Փարիզէն, որ 3 հոգի մեռեր են քօչերայէն:

Յուլիս 22ին ի Մարսիլիս 49, ի թուրք 42 և յ'Ալ 8 հոգի մեռած են:

Յուլիս 20էն ի վեր Փարիզի մէջ գօչերայի դէպք չ'ընկեր հեռագիրը:

ՓՕՍԹԱ

Օսմանեան թղթատարութեան 1882—83 տարուան մէջ ըրած յառաջդիմութեան վրայ որոշ գաղափար մ'ունենալու համար, վարչութեան վերադասու իշխանութիւնը հրատարակած է, զոր կը ներկայենք մեր ընթերցողաց, ինչպէս որ խոստացած էինք նախորդ թուով:

Օսմանեան թղթատարութեան վարչութիւնն ունի 702 նամուկատուն, որ կը ծառայեն 344 պաշտօնեաներ: Պաշտօնեաներու թուին նոմոկատանց թիւէն նշուած ըլլալուն պատճառն այն է որ հեռագրատուն կեցած տեղերը, ասոր պաշտօնեայք բօսթայի պաշտօնէից հետ միացած են, Օսմանեան պետութեան մէջ թղթատարութեան կամ սուրհանդակի համար կը գործածուին 1,600 ձի, որք բաժնուած են 243 կայսրանի, և որոց արմէքն է 4 միլիոն 906,142 դահլէկան: 1882—83 տարուան մէջ դաւաճողը զրկուած են 1 միլիոն 776,363 թղթատարական հասարակ, 143,340 յանձնարարեալ է 636,323 պաշտօնական նիւթեր, վերադասուին ուղղակի հակադրութեամբ, Օսմանեան բօսթայի միջադպրային ծիւղն օտար երկիրներ զրկած է 389,778 թղթատարական հասարակ և 34 հազար 490 յանձնարարեալ նիւթեր: Իսկ ընդամենը է 310,450 հասարակ և 25,333 յանձնարարեալ նիւթեր: Թղթատարութեան ընդ հանուր հասոյթն եղած է 14,404,470 դահլէկան, որմէ 7 միլիոն 833,410 դահլէ. ծախքն հանուելով թղթատարական վարչութիւնը 6,348,060 դահլէկան զուտ հասոյթ կամ շահ մը տրւած է զնոսաւոր ընտանիքներին: Այդ, ասկէ կը հասկցուի որ սոյն վարչութիւնն անսոգք տանելի ընթաց մ'ունեցած է այսչափ շահ գոյարարներու համար, վաճառել եթէ, վարչութիւնն ուղիղ և կանոնաւոր ընթաց մը չունենար բնական էր որ ժողովուրդն օտար թղթատարութեանց դիմէր միշտ: Հեռագրութեան ուղիներուն տարածութիւնն է 23,388 հազարմիլէթ տեղ, որուն վրայ ձգուած են 41,688 հազարմիլէթ երկայնութեամբ թիւեր: Հեռագրական վարչութիւնն ունի 464 կայսրան, որոց 24 կը վերաբերին երկրորդական վարչութիւններու: Ասանց մէջ կը գործածուին 3,284 պաշտօնեաներ, կայսրանաց 339 յատկացեալ են պետութեան դաւաճաց, 104 թէ՛ դաւաճաց և թէ՛ միջադպրային հաղորդակցութեանց և մէկը՝ միայն օտար երկիրներու համար: 133 զգիչեր ցորեկ բաց են, 160 միայն ցորեկը, իսկ 171 օրուան մէջ յատկացեալ քանի մը ժամ: Հեռագրատանց մէջ կիրարկեալ գործիքներն ամենամեծ մասամբ Մօրի գործութեան կը վերաբերին:

Յիշեալ տարեշրջանին մէջ տեղութեան երկիրները զրկուած հեռագրաց թիւը 1 միլիոն 9322ի հասած է, որոց 890,082 արեւելեան, իսկ անացածն եւրոպական լեզուներով: Ասանց 523,331 միայն վճարուելով զարնուած են Գաւառներէն հասած հեռագրաց թիւն է 1 միլիոն 9422, որոց 407,103 արեւելեան իսկ մնացեալներն եւրոպական լեզուներով: Միջադպրային հեռագրատունն օտար երկիրներ զրկած է 123,967, իսկ ստացած է 423,

844 հեռագիր, իսկ փոխադրած է 44,736:

Նշած ծախքն է 22 միլիոն 267,906 դահլէկան, իսկ հասոյթն է 39 միլիոն 223,912, որ հեռուեալ կերպով կը բաժնուի. գաւառական հեռագիրներէ դուրսացած է 29 միլիոն 569,072 դահլէկան որոցմէ պաշտօնական հեռագիրը արտագրւած են 19 միլիոն 378,049 դահլէկան, միջադպրային հեռագիրներէ արտագրւած է 9 միլիոն 634,840 դահլէկան տանց մէջ պաշտօնական հեռագիրը արտագրւած են 869,580 դահլէկան:

Ինչպէս կը տեսնուի այս համառօտ վիճակագրութենէն, օսմ. թղթատարական և հեռագրական վարչութիւնը բարելաւ և կանոնաւոր վիճակ մը կը զբոսնէ: Եւ քանի որ այս կանոնաւոր կացութիւնն ունի այսօր և կատարելագոյն կրնայ համապատասխանել միջադպրային հաղորդակցութեանց ուղղութեան, բնական և իրաւացի է որ օսմանեան կառավարութիւնն ի դէպ ժամ համարի օտար թղթատարական ծառայութիւնները վերջունել մեր երկրէն և իրեն յատուկ վարչութեամբ գործելով իր Գանձը նպատակը օտարին մեր երկրէն քաղած չուհով: Եւ արդարեւ օտար տերութիւնը ուղղակի կամ անուղղակի տրտունջներ կը յայտնեն միշտ մեր կառավարութեան Գանձին անբարեկարգութեան մասին, և սակայն երբ մեր կառավարութիւնը միջոցներ խորհի զայն բարեկարգելու, երբեք ի փաստ օտարաց հանրային կամ անհատական շահուց, (ինչպէս՝ այլ ոչ յոյսիրաւ) այն ատեն տրանջացող այդ տերութիւնը ամեն դժուարութիւն հասնել կը փութան կառավարութեան գործունեութեան դէմ, և ինքնին կ'ապագայութեան թէ մեր երկրին բարեկարգութեան և բարեկաւարութեան այնքան նախանձախօսիչ չեն, որքան ըլլալ կը յայտնեն՝ երբ ինքիք բարենորոգութիւններ և բարեկաւարութիւններ ներմուծելու վրայ է մեր երկրին մէջ: Իսկ եթէ, Աւստրիա և Ֆրանսա և զուգէ սոցա հետ ուրիշ տերութիւնը ևս պնդեն իրենց մերժման վրայ, և եթէ դիւանագիտական վէճ մը յառնու այս խնդրոյ մասին, անյուսպի է որ այս վիճակագրութիւնն անբաւական աստիճանի վրայ է մեր երկրին մէջ: Իսկ եթէ, Աւստրիա և Ֆրանսա և զուգէ սոցա հետ ուրիշ տերութիւնը ևս պնդեն իրենց մերժման վրայ, և եթէ դիւանագիտական վէճ մը յառնու այս խնդրոյ մասին, անյուսպի է որ այս վիճակագրութիւնն անբաւական աստիճանի վրայ է մեր երկրին մէջ:

Թէ և 1881 յուլիս 30ին հրատարակուած պաշտօնական հաշուեցոյցի մէջ ազգային պարտքը 7500 լիւրա նշանակուած է զրկելէ, սակայն պէտք է դիտել նաեւ որ միլիոն միլիոն 694 և իսկ լիւր պարտքաւ և հաւաքելի գումար ցոյց տրուած է, զոր եթէ 8000էն զեղչենք՝ կուենանք 7500, բայց որովհետեւ, ինչպէս այդ պարտքաւ գումար նոյնպէս նաեւ հաւաքելի տարւոյ հաւաքուած և ծախսուած է վերջոյ, տարակոյս չկայ որ օրէնք չէ զայն 8000էն զեղչել, ուստի ազգային պարտքը կը մնայ լիւրա զրկելէ 8000 լիւրա:

ՕՍՄԱՆԵԱՆ ԳԱՆԶ

Նայէ Յրայէ Բուէնէ կ'ընկերէ թէ, Բ. Գուրը կը պնդէ Պերլինի գաշտագրութեան ստորագիր տեղութեանց գանձային առ կախ մնացած ինքիքները լուծելու: Դրան պահանջանքներն են մարտային վերանորոգութիւն, բաւթնիայի սուրբ, տաճկական կառավարութեանէն զատուած գաւառներու տարիք հարկ, և պիւտաճէն հաւասարակշիւութեան համար բաւականացուցիչ աղբիւրներ: Կը պահանջէ նաեւ Անգլիային Կիպրոսի եկամտից տեղիք մասը: Այս մասին Փաշէ-Պաշէ լրագիրը կըսէ թէ, յայտնի է որ եւրոպական անխաւաղութիւն մը կը գործէ ընդդէմ ծածկատանի և օսմանեան արժեթուղթ ունեցողներու, ստիպելով զճաճկատան համակերպիլ Պերլինի գաշտագրութեան այն արամագրութեանց, որոնք ծախքով կրնայ կատարել, առանց սակայն օգնելու որ այդ գաշտագրութեան իրեն նպատակաւ յօդուածներն ի գործ դրուին: Ըստ արդարութեան և

միջադպրային օրինաց կանոններու օսմ. կառավարութենէն զատուող գաւառները պէտք է որ վճարեն իրենց պարտքերը, քանի որ հանրային պարտուց պիտի գործածուին, Թէպէտե Պերլինի գաշտագրութիւնն այսպիսիքը նախագործած է, բայց գործադրութիւնը տարուէ տարի կը յետաձգուի: Բանակցութիւնը առ կախ մնացած են, ժամանակաւ հարկատու եղող երկրներն իրենց հաշուէկշիւը կը շինեն առանց երբեք փայլ ընկել իրենց պարտուց բաժնիք վճարել Օսմ. կառավարութեան: Վերջապէս Պերլինի գաշտագրութիւնը մեռեալ տառ մ'է, վասնզի ստորագրող տերութիւններէն և ոչ մին չը բողբէր այս յանցանաց դէմ:

ՔՐՈՆԻԿՈՆ

ԻԶՄԻՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԿԻՒՆԻ
ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ՎԵՃԱԿՈՒ

Աւստրի վերջին թուոյն մէջ հրատարակուած յիշեալ վերնագրով մեր յօդուածին ներքեւ մուցուած են երկու ծանօթութիւններ զորոց կը հրատարակենք:

Յիշեալ յօդուածին մէջ ըսած էինք. ՎՍԿԱՅԻՆ ՈՐ 1878ին (ազգային պարտքը) 6000 լիւրան կ'անցնէ յանկարծ: 1881 յուլիս 30ին 7300 լիւրայի կը հասնի:

Արգ. ահաւաստիկ այս պարտքութեան ծանօթութիւնը:

Թէ և 1881 յուլիս 30ին հրատարակուած պաշտօնական հաշուեցոյցի մէջ ազգային պարտքը 7500 լիւրա նշանակուած է զրկելէ, սակայն պէտք է դիտել նաեւ որ միլիոն միլիոն 694 և իսկ լիւր պարտքաւ և հաւաքելի գումար ցոյց տրուած է, զոր եթէ 8000էն զեղչենք՝ կուենանք 7500, բայց որովհետեւ, ինչպէս այդ պարտքաւ գումար նոյնպէս նաեւ հաւաքելի տարւոյ հաւաքուած և ծախսուած է վերջոյ, տարակոյս չկայ որ օրէնք չէ զայն 8000էն զեղչել, ուստի ազգային պարտքը կը մնայ լիւրա զրկելէ 8000 լիւրա:

Վերոյիշեալ պարտքութեանն անմիջապէս յետոյ ըսած էինք.

Եթէ այսօր թէ և չենք կրնար ստույգ որոշել, ըստ որում երբ տարին ի վեր ազգային արկի հաշիւները չեն հրատարակուած, սակայն եթէ անպաշտօն զորոյցներու հաւատ ընծայենք՝ 6—700 լիւրայի պարտք մը ևս աւելցած է, մինչ նոյնի վրայ Հոփփսմէ եանց վարժարանին համար փոխառուած 769 լիւրայի գումարը բարդելով դրելով կուենանք 8000 լիւրայի պարտք մը:

Այս այս պարտքութեան ծանօթութիւնն ալ:

Զանց կընենք հաշուել այս դուրսուող պաշտօնական տեղեկագիրներէ բարձրած միւս գումարներուն վրայ, ըստ որում պաշտօնապէս ստուգուած պարտք մը չէ այն: Թէ և այդպէս նոր ի նորոգ զոյգած պարտքերու և կատարուած փոխառութիւններու մասին այլեւս զրոյցներ կը չընենք: Զայն ժողովրդեան մէջ, իսկ այդ զրոյցներու չգիտենք ինչ ստորձան կարեւորութիւն տալ պէտք է, քանի որ 1881 յուլիս 30ին ի վեր ազգային արկի հաշուեցոյց չէ հրատարակուած:

Վեհ. կայսրը քաղաքիս վեհմ. կուսակալ Հաճի Նաշիտ փաշայի տիկնոջ Եւֆրատի պատուանշանը չնորհած է:

